

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուղղը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դր, դարձեալ 100 թուոց համար : Թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման ամօրը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որչեւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ Եկեղեցւո զարի դրանը կից Նոր Գրատունը :

Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն.

Ամեն Տեղապահ Սրբազան Հօր հրատարականը Բ. Գրան չէ տրուեր : Խառն ժողովոյ անդամոց մէջ անհամաձայնութիւն ծագեր է : Ոմանք կի լիկիոյ և Աղթամարայ խնդրոց յուզումը սակաւին անժամանակ կհամարին, իսկ ուրիշները այս խնդրոց կարգադրութիւնը ստիպողական կդատեն եղեր : Խառն ժողովն անցեալ հինգ շաբթի օրէ ի վեր նիստ ըրած չըլլալով, ասկէց աւելի տեղեկութիւն չունիմք առ այժմ : Սակոյն մենք ալ ըստիպողական կհամարիմք յիշեալ խնդրոց լուծումը, բաւական սեպելով անոնց այոչափ ժամանակ երկարածդին : Այսու ամենայնիւ, դարձեալ պարտ կհամարիմք դիտողութիւն ընել թէ, ասոնց համար խիստ հեռատեսութիւն և շրջահայեցութիւն պէտք է :

Այդպիսի Պատրիարքարանի տաճկերէն առաջին գրագիր մեծարգոյ Գէորգ Եփէնտին ասկէց երկու շաբաթ յառաջ հրատարական տուեր է իր պաշտօնէն, բայց տակաւին յայտնի չէ ընդունուած կամ չընդունուած ըլլալը :

— Սերաստիայէն յունիս 18 թրուով գրուած նամակէ մը հետեւեալ լուրերը կը պղտմք :

1. « Բաղաքէս 12 ժամ հեռու Չառայ գիւղաքաղաքը, ուր գայմագամ կնատի, հետագայ բարբարոսական դէպքը տեղի ունեցեր է : — Ասկէց մէկ քանի օր յառաջ, Պարսամենց Մնատնին հարսը գիւղաքաղաքէն կէս ժամ հեռու կերթայ մատի — դեղ ըսուած խտակն ժողկերու համար : Այս միջոցին Ղօշկերու երկու սրիկայ քիւրտեր յանկարծ վրան յարձակելով, երեսնց զազանական կիրքը յագեցունելէն յետոյ աղէկ մ'ալ կծեծեն խեղճը : Գիւղաքաղաքացիք այս եղելութեան լուրն առնելուն պէս, տեղոյն կառավարութեան կիմացունեն որպէս զի պէտք եղած միջոցներն ի դօրծ գնելու աշխատի : Միևնոյն ատեն Եկեղեցւոյն սենեակն ալ ժողով կընեն, և քանի մը քաջախիտ մարդիկ քիւրտերուն ետեւէն երթալով քիչ ժամանակի մէջ կյաջողին շարագործները բռնել և եկեղեցւոյն սենեակը բերելու : Բայց զարմունալի է որ անկէց կարձակուին քիւրտերն, և Պարսամենց

Մնածնը իւր հարսին վրայ կատարուած չարագործութեան դէմ բողոքելու և հատուցում պահանջելու միտում չը յայտնէր : Կըսուի թէ, Մնածնը այս թողլուութիւնն ըրած է, Ապիշան և Ղափու—տաղը Ստրպասպէյերէն վախնարուն համար :

2. « Քաղաքէս 3 ժամու չափ հեռու, քիւրտի դիւղ մը, մէկ քանի գող — ոմանք կըսեն թէ Չէրքէս — կերթան հիւր ըլլալու : Գիւղին մեծը անցադիր կհարցունէ, և անոնք ալ դուրս եկուր որ ներկայացունենք, կըսեն, և հրացանով կպատասխանեն : Խեղճը չնչսպառ գետինը կիշայ : Գիւղացիք անսնելով այս ոճրագործութիւնը, և սաստիկ զայրացած՝ չարագործներուն ետեէն կիշան մինչև քաղաքին մտա : սակայն այս տեղերն անմատչելի լեռնային ըլլալուն անցատ կըլլան : Կառավարութեան կողմանէ շտուկով, ստիկանաց խումբ մը ետեւնուն զրկուեցաւ, բայց դեռ յայտնի չէ թէ բռնած են, թէ՛ ոչ :

3. « Քաղաքիս մէջ թաշխան ըսուած տեղին մտա սրճարան մը շինուեցաւ, ուր միայն սուրճ պիտի դորձածուէր . բայց վարձու բռնողները ստախով խաղ խաղալ կուտային համարձակ և ամեն տեսակ ըմպելիք յայտնի կըրուէին : վերջին օրերս յաճախորդներուն մէջ սաստիկ կոխ մը ծագած, և սրճարանապետներն ալ խառնուած ըլլալով, կառավարութեան կողմանէ բանտարկուեցան թէ կռուարարներն և թէ սրճարանապետները, որ երկու յոյն են » :

Այս նամակին վերջին երկու մասերուն վրայ մեր կողմանէ ըսելիք մը չունինք, բայց առաջին մասը՝ որ ազ-

գային տիկնոջ մը պատահած բարբարոսական դորժը կպատմէ, չկրնար մեր ուշադրութենէն վրիպիլ : Տեղական կառավարութիւնը ի հարկէ պիտի գտնէ չարագործները և պատժէ : Զարմանալով կնկատեմք որ անոնք գիւղացուց կողմանէ կըսուին բայց յետոյ թող կըարուին առանց կառավարութեան յանձնելու : Ըստ մեզ, այս չարագործութեան հեղինակներէն աւելի պատժոյ արժանի են զանոնք արձակելու պատճառ եղողները, և մասնաւորապէս Պարսամենց Մնածն ըսուած անձը, որ անտարբեր կիկենայ իւր հարսին պատուոյն դէմ եղած չարագործութեան դէպքի մը մէջ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայի օմանսեան դեռպանը, օգոստ . Սուլթանին գահակալութեան տարեդարձի օրը, դեռպանատան մէջ վառուոր կոչունք մը աուեր է օտար տէրութեանց ներկայացուցչաց և բարձրաստիճան պաշտօնակալաց : Տաճկաստանի և Աւստրիոյ կայսերաց կենաց համար բաժակներ առաջարկուեցին :

— Մայրաքաղաքիս մէջ շրջաբերով արժաթ 3 ֆրանկնոյներուն մէջ նենդեպներ գանուած ըլլալով, ուշադրութիւն ընել պէտք է :

— Լիրանանու մէջ այս տարի մեծաքսի բերքը արդիւնաւոր է եղեր, բայց շերամագործները ժամանակահունար շատ բռնած, և թիթի տերերները բաւական չըլլալով՝ մէկ բեռը 25 դուրուշի աններու տեղ այս տարի մինչև 200 դուրուշ ալ առնուած ըլ-

լարով, յուսացուած շահը չպիտի ըլլայ եղեր:

—Յազըլ Մուսթաֆա փաշան սուաշիկայ հինգ շաբթի օրը եւրոպայէն մայրաքաղաքս պիտի դառնայ եղեր:

—Կադի գործածութիւնը մայրաքաղաքիս մէջ ալ գրեթէ ընդհանրացած ըլլալով, կարևոր կհամարիմք ծանուցանել թէ՛ կազ առնելու ատեն, Ամերիկայի կազ ըլլալը որոշելու համար պէտք է տեղ մը քիչ մը դնել, և ծծմբաւով (քիպրիթ) փորձել. եթէ վառի կհասկցուի թէ աղէկ տեսիլն է:

—Հետեւեալ ծիծաղաշարժ դէպքը պատահեր է մայրաքաղաքէկ 8—10 օրուան հետո քաղաքի մը մէջ: Մարդ մը տեսնելով որ ժամացոյցը աղտոտած ըլլալուն համար աղէկ չբանիք, շուտ մը կըսայ ժամացոյցը: Սակայն երբ կտեսնէ որ այս գործողութիւնէն ետքը ամենեւին չբանիր, ժամագործ մը կկանչէ և խնայունելով թէ ինքը աղէկ մը մաքրած է, կզահանջէ որ բանեցունէ: Ժամագործը կշուարի կմնայ թէ ինչպէս բանեցնելու է այն ժամացոյցը, որ բաւական ժամանակ շուրջ մնացեր է մաքրուելու համար:

Ժամացոյցը լուարով մաքրելու և բանեցունելու երեսոյ անձը հասարակ կարգի մարդ չէ, այլ շատ բարձր ստիճան ունեցող, և հազարաւոր մարդիկ կառավարելու պաշտօն ու իշխանութիւն ունեցող անձ մ'է:

Ռուսիոյ կայսրն ու կայսրուհին լաս, օգոտտ. Յին Օսէաս և անկէց Գրըմ գիտի գան եղեր:

—Աթէնքի սպանիական գետալանութիւնը վերջուեր է:

—Գաղղիոյ կառավարութիւնը որոշեր է որ, զինուորք և զինուորական հրամանատարք օտար տէրութեանց կողմանէ ընծայուած պատուանշան և միտալ չկրեն իրենց պաշտօնին մէջ գտնուած ատենին, այլ Գաղղիոյ կողմանէ իրենց կարգին ու աստիճանին համեմատ արուած պատուանշաններով ու միտայներով զարդարուին:

—Տանիմարդայի թագաւորն ու թագուհին և բոլոր արքունիքը Սթոքոլմ երթալու համար ճամբայ ելեր են, ուր Շուէաի թագաւորին աղձկան հետ Տանիմարդայի դահածանանդ իշխանին ամուսնութեան հանդէսը պիտի կատարուի անոյցս 13ին:

—Մեզդիոյ կառավարութիւնը որոշեր է որ ծախային զինուորները այստե՛տե՛տե՛ մօրու քնին, ու պէխերնին չածիլեն, բայց երկար մօրուք ալ չունենան և չըլլայ թէ մօրուք թող տալով միայն պէխերնին ամիլեն և անհաճոյ տեսք մը ունենան:

—Մէկ քանի տարիէ ի վեր Ամերիկայի մէջ թէյի մշակութիւնը յառաջ տարուած, բայց Չինաստանի թէյին ճաշակէն զուրկ եղած ըլլալուն պատճառաւ, յասկապէս ասոր համար Չինաստանէն Սմերիկա գործաւոր պիտի բերուի եղեր:

Հոռոմեակոն Հայտ

Հետզհետէ կծանրանայ մեր այս աղգայնաց ներքին վիճակը: Երկու կուսակցութեան բաժնուած, սկսած են իրարու դէմ խօսիլ: Մէկը մինչև երկրորդութեան արժանի կհամարի Հասունեան էֆէնաին, և նա իրական

անոր ամեն գործերն : իսկ միան բո-
լորովին հակառակը կսնդէ :

Հատունեան էֆէնախին հրաւիր-
մամբ և նախագահութեամբ ըլլալիք
կրօնական ժողովը ամենուն ուշա-
գրութեան և խորհրդածութեան կա-
րևոր նիւթ մ'եղած է : Մինչև հիմա
ոչ ոք ստոյգ գիտէ այս ժողովոյն մէջ
դրուելիք խնդիրները : Սակայն շա-
տերը կը ուշակեն թէ՛ այս ժողովին
դործը պիտի ըլլայ բոլորովին Հռոմաց
այսինքն լատինաց յարմարել եկեղե-
ցական ծիսից և արարողութեանց մէջ
ող : Եթէ արդարև այս պիտի ըլլայ
ժողովին գործը, սնտարակոյտ մասն
մասն պիտի ըլլան Հայ հռոմէականք
և միութիւնը անկարելի պիտի ըլլայ :

Այս ժողովն երէկ առաջին նիս-
տին ըրած ըլլալու է : Հատունեան է-
ֆէնախին զատ՝ որ իբրև նախագահ
պիտի գտնուի, 17 արքեպիսկոպո-
սոսնք և եպիսկոպոսոսնք պիտի բաղ-
մին : Առնցմէ զատ, 13 աստուածա-
բան, 1 առաջարկու, 6 նօտար, 2 ըն-
թերցող, 2 արարողապետ, 2 խնամա-
կալ և 2 փակակալ ներկայ պիտի ըլ-
լան եղեր, որոնց 3ը՝ սարկաւառք, և
մնացածները վարդապետ են :

Տեսնենք թէ ինչ պիտի ծնին :

Մայրաքաղաքիս բոլոր գրավաճառաց
բով կծակուին հետեւեալք՝ որ վտեմ . 3.
Վարդան պէյի գրչէն ելած են .

Բարեւ Տէրերէն Եպիսկոպոս Բարեւալեմ
Քէլեխին երբ պետէն քիս մաղաթախալարք :
Գին 5 զուրուչ :

Թէլէրնի էլէրնի կամ էլէրնի
հեռաբեր (պարզ և համառօտ բացատրու-
թիւն զանազան եղևորական հնագորաց

ու անոնց գործածութեանը) : Գին 5 զրչ
Սահմանարդական ճշմարտութիւննէր ու-
անոնց պարտաւորութիւննէրը : — Գին 5 զրչ :

Պոնես Տէրնաւորը, Երանոս Բոր-
ճարտ և ընչաբեայ պրահարտ

Այս հանրածանօթ և ընտիր վէպին
թարզ մանութեան ու սպազրութեան
ձեռք զարնուած է, շարաթը 16 ական
երեսէ բողկացեալ երկերկու մեծա-
գիր թերթեր հրատարակելով : Բա-
ժանորդագրութեան գինն է մէկուկես
արծաթ մէճիւր . իսկ զատ թիւ առ-
նել ուղղը հատին 2 զուրուչ պիտի
վճարէ : — Բաժանորդագրութեան տե-
ղըն է Պ. Յ. Գալվաֆեանի գրատունը,
և Զորապէի խանին գէմ թիւ 11 վա-
ճառանոցը :

Մի հէնախեան մեծ . Յովհան-
նէս աղայի տպարանէն գեղեցիկ
նորաձև տաճիկ գրերով է լցյա ընծայ
նալ « Թարիգի Մէրվէթ » անուն բա-
րոյական տետրակ մը, Յական զուրուչ
կծակուի Մէրճանը Մարգարեան Պ.
Քերովբէի 88 թիւ, Մահմուտ վա-
չայ ֆիւրքճի խանի գիմացը իղմը
լեան Պ. Սողոմոնի, Ուղուն շարքը
գրուլը Տնտեսեան Պ. Եղեայի 416
թիւ գրատունը, կալաթա Ս. Լու-
սաւորիչ եկեղեցւոյ գիմացը Մի հէն-
ախեան տպարանը, թ. 17 :

ՏԵՐԵՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. Ա. Ա. Ն. Ա. Ա.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Յ. ԵՒ Բ. Ա. Ա.